

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԱԻ 7-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Տիգրան Արեյանս, աշխատելով ՀՀ արդարադատության նախարարության գնումների կազմակերպման և տնտեսական ապահովման վարչության նյութատեխնիկական ապահովման և սպասարկման բաժնում որպես փորձագետ, 2025 թվականի փետրվարի 7-ից մինչև 2025 թվականի մայիսի 7-ը ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

- իրականացրել եմ Նախարարությանն ամրակցված անշարժ և շարժական գույքի հետ կապված կառավարման գործընթացներ, նյութական արժեքների գույքագրում,
- ապահովել եմ Բաժնի գործունեության ոլորտում գտնվող նյութատեխնիկական միջոցների հանձնման, ընդունման աշխատանքները,
- ապահովել եմ Նախարարության տնտեսական սպասարկման, ինչպես նաև գույքի և ապրանքների ընդունման և նպատակային բաշխման աշխատանքները,
- կազմել եմ նյութատեխնիկական ապահովման և սպասարկման ոլորտին առնչվող վիճակագրական հաշվետվություններ,
- կազմակերպել եմ Նախարարության գրասենյակային տեխնիկայի և տեխնիկական այլ միջոցների անխափան և արդյունավետ շահագործման աշխատանքները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

07.05.2025թ.



ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ